



ԹԱԳՈՒՀԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀՊՏՀ միկրոտէկոնոմիկայի և ծեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի հայցորդ, ՃՇՀԱՀ դասախոս

ՀՀ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ՄԱՐԺԱՅԻ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Էներգետիկ ոլորտում իրականացվող սակագնային քաղաքականության արդյունավետությունը ուղղակիորեն ազդում է բնակչության կենսամակարդակի, այդ թվում՝ աղքատության հիմնախնդրի լուծման վրա, հետևաբար էլեկտրաէներգիայի սակագնի հաշվարկման ճշգրիտ մեթոդաբանության սահմանումը գերակա խնդիրներից է: Հոդվածում ներկայացված են սակագնային արդյունավետ մարժայի նոր մեթոդաբանական մոտեցումներ, որոնց հիմքում տեխնոլոգիական կորուստների նվազեցման և «ՀԷՑ» ՓԲԸ-ի օպտիմալ շահութաբերության մակարդակի սահմանումն է:

Հիմնաբառեր. էլեկտրաէներգետիկական համակարգ, էներգետիկ բնագավառ, էլեկտրաէներգիա, պետական կարգավորում, սակագին, սակագնային մարժա

JEL: Q43, Q41

Էներգետիկ համակարգի զարգացման մակարդակը ուղղակիորեն ազդում է ընդհանուր տնտեսական համակարգի բնականոն գործունեության վրա: Միևնույն ժամանակ, այն կենսական նշանակություն ունի բնակչության սոցիալ-տնտեսական, հոգևոր, մշակութային և մյուս պահանջմունքների բավարարման հարցում: Ուստի, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ էներգետիկ համակարգի ծառայությունների ուղղակի սպառողը բնակչությունն է, ավելի է կարևորվում էներգետիկ ոլորտում սակագնային քաղաքականության

արդյունավետությունը, քանի որ այն ուղղակի ազդեցություն ունի բնակչության կենսամակարդակի, այդ թվում՝ աղքատության հիմնախնդրի լուծման վրա: Կայուն էներգամատակարարում ապահովող էներգետիկ համակարգի կառուցման կարևորագույն նախապայմաններից են էներգաբետուրների քաղաքակիրթ շուկայի և շուկայական սկզբունքների հիման վրա գործող միջավայրի ձևավորումը, առաջարկի և պահանջարկի ազդեցությամբ ուղղորդվող սակագնային քաղաքականությունը: Էներգետիկ ոլորտի զարգացման հեռանկարների կառուցման հիմքում կարևորվում են նաև էներգետիկ ոլորտի գործունեությունը կանոնակարգող օրենսդրական դաշտի կատարելագործումը, կառուցվածքային փոփոխությունները, մրցակցային միջավայրի ձևավորումը, իրավական կարգավորման թափանցիկության ապահովումը և այլն:


ՀՀ-ն որդեգրել է կայուն տնտեսական զարգացման քաղաքականություն, ինչն ամենից առաջ ենթադրում է տնտեսության ճյուղերի համաչափ զարգացում: Եվ այդ համատեքստում էներգետիկան, որպես կարևորագույն ոլորտ, որակական և քանակական իր զարգացմամբ կոչված է ապահովելու երկրի ու տնտեսության առաջընթացը:¹

ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգում սակագների ձևավորումն իրականացվում է յուրաքանչյուր տարի և բաղկացած է մի քանի փուլից: Նախ, հիմք ընդունելով շուկայի մասնակիցների տրամադրած տեղեկությունը, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (ՀԾԿՀ) տարվա կտրվածքով կազմում է Հայաստանում էլեկտրաէներգիայի սպառման կանխատեսում (կիրովատ-ժամ): Ներկայումս վերջնական սպառողները բաժանված են հինգ խմբի՝ 110, 35, 6(10), 0,38 և 0.22 կՎտ լարմամբ սնվող սպառողներ և բնակչություն², որի ամեն խմբի համար սահմանված է համապատասխան սակագին: Սպառողների բոլոր խմբերի համար առանձնացված են նաև գիշերային սակագներ, որոնք համեմատաբար ցածր են ցերեկայինից, ինչի հիման վրա ձևավորվում է էլեկտրաէներգիայի սպառման կանխատեսում յուրաքանչյուր հաստատված սակագնով, էլեկտրաէներգիայի սպառման միջին կշռութային սակագնով և Հայաստանի ներքին շուկայում էլեկտրաէներգիայի սպառումից, «ՀԷՑ»ՓԲԸ-ի ընդհանուր հասույթի մասով՝ դրամական չափման միավորով: Սակագնագոյացման գործող մեթոդաբանության համաձայն՝ էլեկտրաէներգիայի սպառումից ընկերության հասույթը պետք է հավասար լինի սպառված էլեկտրաէներգիայի գնման համար ծախսերի գումարին և սակագնային մարժային³: 1 կՎտ/ժ սակագնային մարժան ձևավորվում է վաճառքի միջին սակագնի և գնման միջին սակագնի տարբերության արդյունքում: Սակագնային մարժայի ձևավորման բաղադրիչները ներկայացնենք գծանկարի միջոցով:

¹ Տե՛ս Մրցակցություն և կարգավորում, Մ. Մելքունյան և ուրիշներ, Եր., «Տնտեսագետ», 2014 («Ամբերդ» մատենաշար), էջ 39:

² Տե՛ս ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015-N174Ն որոշում:

³ Տե՛ս <http://psrc.am/images/News/haytararutyun/2017/13.12.17n/2.pdf> ՀԾԿՀ որոշումը ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թ. նոյեմբերի 1-ի №79ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:



Գծանկար 1. Սակագնային մարժայի կառուցվածքը⁴

Այսպիսով, սակագնային մարժայի հաշվարկման հիմքը լիցենզավորված անձի անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքն է, համաձայն վերջինիս՝ հաշվարկային տարվա (12 ամսյա ժամանակաշրջանի) անհրաժեշտ հասույթը (ԱՀ) հաշվարկվում է⁵ գնվող էլեկտրաէներգիայի արժեքի (ԳԷԱ), լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ շահագործման և պահպանման ծախսերի (ՇՊԾ), լիցենզավորված գործունեության իրականացման համար ներգրավված հիմնական միջոցների մաշվածության և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի (Մ), լիցենզավորված գործունեության իրականացման համար ներգրավված զուտ ակտիվների դիմաց թույլատրելի շահույթի մեծության (ԹՇ), լիցենզավորված անձի անհրաժեշտ հասույթի և գնված էլեկտրական էներգիայի արժեքի տարբերության՝ հաշվարկային և փաստացի մեծությունների շեղման արդյունքում ձևավորված փոխհատուցման ենթակա գումարի (ՓԳ), անհուսալի դեբիտորական պարտքերի մեծության (ԱԴՊ) հանրագումարի և լիցենզավորված անձի կողմից իրավաբանական անձանց էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցումից ստացված հասույթի (ԲՀԾ) տարբերության միջոցով:


⁴ Տես՝ <http://www.ena.am/downloads/report-2017arm.pdf>

⁵ Տես՝ <http://psrc.am/images/News/haytararutyun/2017/13.12.17n/2.pdf>, ՀԾԿՀ 13.12.2017 թ. նիստի №542-Ա որոշում 2002 թվականի նոյեմբերի 1-ի №79ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:


Համաձայն սակագների հաշվարկման մեթոդաբանության՝ թույլատրելի շահույթը հաշվարկվում է որպես շահույթի հաշվարկման բազայի և ակտիվների շահութաբերության նորմայի արտադրյալ, շահույթի հաշվարկման բազան՝ օգտակար և օգտագործվող ակտիվներում կուտակված ներդրումների գումարի և կուտակված մաշվածության տարբերություն:

Շրջանառու կապիտալը ամեն գործառնական պարբերաշրջանում ընթացիկ գործունեության մեջ ներդրվող կապիտալ է: Շահույթի հաշվարկման բազայում ներառվող շրջանառու կապիտալի մեծությունը հաշվարկվում է որպես լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ բոլոր ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների տարբերություն, որոնք որոշվում են՝ ելնելով դրանց՝ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ համաձայնեցված շրջանառության ժամկետներից:

Այժմ ներկայացնենք 2018-2019 թթ. սակագնի կառուցվածքը և սակագնային մարժայում առկա բաղադրիչների վերլուծությունը դրամական արտահայտությամբ:



Գծանկար 2. *Սակագնի կառուցվածքը՝ 39.9 դրամ/կվտ/ժ (այդ թվում՝ ԱԱՀ)*




Գծանկար 3. *Սակագնային մարժայի կառուցվածքը՝ 11.6 դրամ/կվտ/ժ (առանց ԱԱՀ-ի)⁶*

⁶ Տես՝ <http://www.ena.am> կայքի հրապարակումներ:

Այսպիսով, սակագնային մարժայի կառուցվածքում գերակշիռ մասը կազմում է աշխատավարձի գծով ծախսը՝ 3.40 դրամ/կՎտ/ժ: Այնուհետև շահույթ և կորուստներ ու սեփական կարիքներ արժեքն է, համապատասխանաբար՝ 2.92 և 2.81 դրամ/կՎտ/ժ: 2015 թ. սակագների վերանայման ժամանակ աշխատավարձի գծով ծախսի (18734.4 մլն դրամ) հաշվարկում աշխատողների թվաքանակն ընդունվել է 7806 (փաստացի տվյալների հիման վրա), իսկ միջին ամսական աշխատավարձը՝ 200.000 դրամ (ներառյալ հարկերը): Համաձայն «ՀԷՑ»-ի՝ մեթոդաբանությամբ 2016-2020 թթ. աշխատավարձի գծով ծախսը նախատեսվել է թողնել անփոփոխ, 2021-2025 թթ. համար աշխատավարձի ծախսերի առավելագույն չափը կհաշվարկվի 6706 աշխատողների թվաքանակին համապատասխան, 2025-2027 թթ. հաշվարկներում՝ առավելագույնը 6426, իսկ 2028 թվականից՝ առավելագույնը 6146 աշխատողների թվաքանակին համապատասխան: Սակայն դեռևս ներկայացված չեն այն փաստարկները, թե ինչ միջոցառումների արդյունքում կիրականացվի աշխատակիցների թվաքանակի կրճատումը, և որքանով է դա հիմնավորված: Մյուս կողմից, աշխատողների թվաքանակի նվազումը էական չի լինի աշխատավարձի գծով ծախսերի կրճատման մեջ, քանի որ «ՀԷՑ» ընկերության կողմից, աշխատակիցների թվաքանակի օպտիմալացման արդյունքում, աշխատանքը կորցրած նախկին աշխատակիցները առաջին մեկ տարվա ընթացքում վարձատրվում են աշխատավարձի 100%-ի չափով, իսկ երկրորդ տարում՝ 50%-ի: Հետևաբար, անհրաժեշտ է մշակել աշխատանքի վարձատրման առավել արդյունավետ համակարգ, որը կնպաստի սակագնային մարժայի կառուցվածքում աշխատավարձի գծով ծախսերի մասնաբաժնի նվազեցմանը, ինչը և ուղղակիորեն կհանգեցնի սակագնի մակարդակի իջեցմանը: Մեր գնահատմամբ՝ հաշվարկման մեթոդաբանության մեջ վերանայման կարիք ունի թույլատրելի շահույթի հաշվարկը, որը ներառում է ըստ ակտիվների շահութաբերությունը, որն էլ իր հերթին՝ հիմնական կապիտալը և կատարված ներդրումները՝ առանց մաշվածության ներգրավման: Մեր կարծիքով՝ էլեկտրաէներգետիկական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման տեսանկյունից առավել նպատակահարմար է այստեղ օգտագործել շահույթի և հասույթի համեմատությունը: Սա բացատրվում է այն հանգամանքով, որ ազատ շուկայական հարաբերություններում և մրցակցային հավասար պայմաններում գործող ընկերության ներդրումային ռիսկերի պատասխանատվությունը, կապված շահութաբերության հետ, կրում են հենց ընկերությունները: Սակայն բնական մենաշնորհի պարագայում ՀԾԿ-ի կողմից հաստատված ներդրումների շահութաբերությունն ապահովված է, քանի որ ներդրումների թույլատրումից հետո ռիսկերը ներառվում են սակագնում, ու պատասխանատվությունը փոխանցվում է վերջնական սպառողին: Համաձայն այս մեթոդաբանության՝ թույլատրելի զուտ շահույթը հաշվարկվում է որպես շահույթի հաշվարկման բազայի, այսինքն՝ բաժնետոմսերի ամբողջական գումարի, տվյալ ժամանակաշրջանի ներդրումների հանրագումարի և մաշվածության տարբերություն՝ բազմապատկած շահութաբերության նորմայով: Այս մոտեցումն իհարկե արդարացված էր հետխորհրդային ժամանակաշրջանում, երբ էլեկտրաէներգետիկական համակարգը դեռ կազմավորման և կայացման փուլում էր, և համակարգում գործող ընկերությունների խրախուսման անհրաժեշտություն կար՝ բարենպաստ պայմաններ ստեղծելով գործունեության և ներդրումների համար: Ներկայումս այդ փուլը կարելի է համարել հաղթահարված, հետևաբար կարգավորումն

անհրաժեշտ է ոչ թե ըստ ակտիվների շահութաբերության մեթոդաբանության, այլ ըստ կազմակերպության գործունեության շահութաբերության: Շահույթի նորման << դրամով ներդրումների մասով կազմում է 14% (հարկումից հետո) և ԱՄՆ դոլարով ներդրումների մասով՝ 12% (հարկումից հետո), իսկ շահույթի հաշվարկման բազան << դրամով կատարված ներդրումների մասով կազմում է 79.2 մլրդ դրամ, ԱՄՆ դոլարով կատարված ներդրումների մասով՝ 30.83 մլն ԱՄՆ դոլար: Հանձնաժողովը ակտիվների շահութաբերության նորման՝ 12%-ը, սահմանում է՝ ելնելով Հայաստանի Հանրապետությունում ռիսկի նույն մակարդակով գործող ընկերությունների շահութաբերության վերլուծությունից:⁷ Սակայն այս մեթոդաբանությամբ շահութաբերության նորմայի սահմանման թերությունն այն է, որ Հայաստանի Հանրապետությունում չկան ռիսկի նույն մակարդակով գործող ընկերություններ, և «ՀԵՑ»-ը << տարածքում էլեկտրաէներգիա բաշխող միակ ընկերությունն է: Մյուս տեսանկյունից, առաջարկում ենք իրականացնել ակտիվների գնահատման մշտադիտարկում՝ բացահայտելու համար ակտիվների արժեքների գնահատման օբյեկտիվությունը և անհրաժեշտության դեպքում կատարել ակտիվների վերագնահատում: Սակագնի հաշվարկներում էլեկտրաէներգիայի կորուստները բաշխիչ ցանցի մուտքի նկատմամբ կազմում են 11.03% (2.695 դրամ/կՎտ/ժ), իսկ սեփական կարիքների էլեկտրաէներգիան՝ 0.44% (0.108 դրամ/կՎտ/ժ): Բաշխիչ ցանցում էլեկտրաէներգիայի կորուստների 11.03% մեծությունը որոշվել է 2015 թ. սակագների վերանայման ժամանակ, որից 10.03%-ը տեխնոլոգիական անխուսափելի կորուստներն են, իսկ 1%-ը՝ մեթոդաբանությամբ նախատեսված թույլատրելի առևտրային կորուստները: Ընդ որում, մինչև 2021 թ. սակագնի հաշվարկներում կորուստները կմնան անփոփոխ՝ 11.03%: Սեփական կարիքների համար օգտագործվող էլեկտրաէներգիայի ծախսը 01.02.2018-01.02.2019 թթ. սակագնային տարվա համար կազմում է 0.44% կամ 27.6 մլն կՎտ/ժ:⁸ Ներկայացնենք 2003-2017 թթ. << էներգահամակարգում բաշխման ցանցի կորուստների շարժընթացը:



Գծանկար 4. << էներգահամակարգում բաշխման ցանցի կորուստների շարժընթացը⁹

⁷ Տե՛ս Հավելված 1, էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման N 0092 լիցենզիայի պայմանների «Լիցենզավորված անձի անհրաժեշտ հասույթի և սակագնային մարժայի հաշվարկման» մեթոդաբանություն:

⁸ Տե՛ս << Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 09.08.17թ N344Ն որոշում:

⁹ Տե՛ս www.psrc.am կայքի հրապարակումներ:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի սակագնային մարժայի հաշվարկում ներառվող, բաշխիչ ցանց մուտք գործող էլեկտրաէներգիայի նկատմամբ թույլատրելի կորստի մեծությունը մինչև 2016 թ. նվազել է 9.97%-ով, իսկ 2016-2017 թթ. այն մնացել է հաստատուն՝ 11.03% և պահպանվելու է մինչև 2021 թվականը: Միևնույն ժամանակ, փաստացի կորուստների ծավալը, մինչև 2015 թվականը, գերազանցում էր թույլատրելի կորուստները, ինչն էլ հանգեցրել էր ընկերության՝ տարեկան շուրջ 2.5-3 մլրդ դրամ վնասի կուտակմանը՝ արդյունքում կրելով 27 մլրդ 600 մլն դրամի չնախատեսված վնաս: 2004-2014 թթ. ժամանակաշրջանում «ՀԷՑ»-ի կատարած 113 մլրդ դրամ ներդրումներից 20 միլիարդը հանձնաժողովը չի ընդունել, և այն մնացել է կազմակերպության հաշվին: Սակագնով կատարած ծախսը չի վերադարձվել, քանի որ մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ ընկերությունն իր ներդրումները կատարել է շուկայականից բարձր գներով և կիրառել ոչ նպատակային: 2015-2017 թթ. փաստացի կորուստները շարունակել են պակասել, մինչդեռ ՀԾԿՀ-ի սահմանած թույլատրելի կորուստների սահմանաչափը մնում է հաստատուն՝ 11.03%, ինչն էլ հնարավորություն չի ընձեռում տեխնոլոգիական կորուստների փաստացի կրճատման արդյունքում հասնել մարժայի նվազմանը: Ուստի առավել նպատակահարմար է ռեժիմի պարամետրերի չափումների տվյալներով օպերատիվ հաշվարկներ կատարել՝ նպատակաուղղված էլեկտրաէներգիայի կորուստների ընթացիկ արժեքների հսկմանը, էլեկտրական ցանցի սխեմայի և ռեժիմի ընթացիկ փոփոխությունների ճանապարհով կորուստների նվազեցմանը, էներգաօբյեկտների հզորության հաշվեկշռի և սահմանաքանակների օպերատիվ հսկմանը և դրանց փոփոխությանը ժամանակի ընթացքում, ընթացիկ հաշվարկային ժամկետի վերջին սպասվող էլեկտրաէներգիայի կորուստների գնահատմանը, տեղեկատու բանկի ստեղծմանը, որը կօգտագործվի ընթացիկ և ապագա ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի կորուստների հաշվարկներում: Միևնույն ժամանակ, հնարավորություն կստեղծվի տեխնոլոգիական կորուստների նվազեցմանն ուղղված ներդրումների նպատակայնության և շուկայական գների միջև համապատասխանության բացահայտման միջոցով օգտագործելու այն ռեզերվները, որոնք կնպաստեն էլեկտրաէներգիայի սակագնի նվազեցմանը: Այսպիսով, կարելի է նշել, որ սակագնի հաստատման մեթոդաբանությունն ունի բազմաթիվ թերություններ, մասնավորապես՝ բացակայում են գների քննարկումը թույլատրող կառուցակարգերը, որոնք վերջնական սպառողներին տրամադրվող էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման լրացուցիչ հնարավորություններ են ստեղծում: Շուկան շահագործվում է միայն փաստացի ռեժիմով և սակագնի սահմանված վերին շեմով, ուստի վերը նշված խնդիրների արդյունավետ լուծումների կիրառման պայմաններում հնարավոր կլինի նվազեցնել էլեկտրաէներգիայի բաշխման կորուստները և բարելավել էներգամատակարարման հուսալիությունը: Այն կարող է նաև բարելավել էներգետիկ համակարգի փոխկապակցվածությունը հարևան երկրների համակարգերի հետ և ընդլայնել էլեկտրաէներգիայի անդրսահմանային առևտուրը: Հայաստանի՝ էլեկտրաէներգիա փոխադրող և բաշխող հզորություններն այսօր արդեն իսկ ծանրակշիռ ներուժ ունեն՝ հանրապետությունը դարձնելու էլեկտրաէներգիայի տարանցիկ կենտրոն, որն ունակ է ողջ երկրի տարածքով՝ հարավից հյուսիս և հակառակ ուղղությամբ, էլեկտրաէներգիա փոխադրելու և արտահանելու, ինչն էլ ավելի է կարևորում սակագնային արդյունավետ մարժայի նոր մեթոդաբանական մոտեցումների ձևավորման առաջնահերթությունը:

Օգտագործված գրականություն

1. Մրցակցություն և կարգավորում, Ս. Մելքունյան և ուրիշներ, Եր., «Տնտեսագետ» («Ամբերդ» մատենաշար), 2014:
2. Դ.Թ. Արշակյան, Հայաստանի էներգետիկան, անցած ուղին և զարգացման հեռանկարները, Եր. 2002:
3. Железко Ю.С., Выбор мероприятий по снижению потерь электроэнергии в электрических сетях. М., Энергоатомиздат, 1989.
4. «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 07.03.2001:
5. ՀՀ ՀԾԿՀ 2015-N174Ն որոշում:
6. ՀՀ ՀԾԿՀ 09.08.17թ N344Ն որոշում:
7. ՀՀ ՀԾԿՀ որոշում ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թ. նոյեմբերի 1-ի №79ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
8. ՀՀ ՀԾԿՀ 13.12.2017 նիստի №542-Ա որոշում 2002 թ. նոյեմբերի 1-ի №79ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
9. Հավելված 1, Էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման N0092 լիցենզիայի պայմանների «Լիցենզավորված անձի անհրաժեշտ հասույթի և սակագնային մարժայի հաշվարկման» մեթոդաբանություն:
10. www.ena.am կայքի հրապարակումներ:
11. www.psrc.am կայքի հրապարակումներ:
12. <http://report.gov.am/?id=8> ՀՀ Կառավարության գործունեության արդյունքներ:

ТАГУИ БАРСЕГЯН

Соискатель кафедры микроэкономики и организации
предпринимательской деятельности АГЭУ,
преподаватель в НУАСА

Методы формирования тарифной эффективной маржи в электроэнергетической системе Армении.–

Эффективность тарифной политики, реализуемой в энергетическом секторе, напрямую влияет на уровень жизни населения, в том числе на проблему бедности. Поэтому точная методология расчета тарифа на электроэнергию является одним из приоритетов. В статье представлены новые методологические подходы к эффективной тарифной марже, основанные на снижении технологических потерь и определении оптимального уровня рентабельности ЗАО “Электрические сети Армении”.

Ключевые слова: *электроэнергетическая система, энергетическая сфера, электроэнергия, государственное регулирование, тарифы, тарифная маржа.*

JEL: Q43, Q41

TAGUHI BARSEGHYAN

Researcher at the Chair of Microeconomics and
Organization of Entrepreneurial Activity at ASUE, Lecturer at NUACA

Methods of Forming Tariff Effective Margin in Armenia's Electricity System.–

The effectiveness of the tariff policy implemented in the energy sector directly affects the living standards of the population, including the problem of poverty. Therefore, the proper methodology for calculating the electricity tariff is one of the priorities. The paper presents new methodological approaches to effective tariff margin based on the reduction of technological losses and the determination of optimal profitability level of CJSC “Electric Networks of Armenia”.

Key words: *electro-energetic system, energetic sphere, electricity, state regulation, tariffs, tariff margin*

JEL: Q43, Q41